Հպանցիկ հայացք Medicare ծրագրին

Ի՞նչ է Medicare-ը

Medicare-ը առողջության ապահովագրության ծրագիր է՝

- 65 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձանց համար
- Մինչեւ 65 տարեկան մարդկանց համար, ովքեր ունեն որոշ հաշմանդամություն
- Սուր երիկամային հիվանդությամբ տառապող ցանկացած տարիքի անձանց համար (ESRD) (հեմոդիալիզի կամ երիկամի պատվաստում պահանջող երիկամի քրոնիկ անբավարարվածություն)

Որո՞նք են Medicare-ի տարբեր մասերը

Մաս A-ն (Հիվանդանոցային ապահովագրություն) օգնում է հատուցել հետևյալի համար՝

- Հիվանդանոցներում ստացիոնար բուժում
- Որակավորված բուժքույրական հաստատություններում խնամք
- Ծանր հիվանդների խնամք
- Բազմաթիվ կանխարգելիչ ծառայություններ

Մաս B-ն (Բժշկական ապահովագրություն) օգնում է հատուցել հետևյալի համար՝

- Բժիշկների և առողջապահական այլ ծառայություններ մատուցողների ծառայություններ
- Արտահիվանդանոցային ծառայություններ
- Տնային պայմաններում մատուցվող առողջապահական ծառայություններ
- Երկարաժամկետ օգտագործման բժշկական սարքավորումներ (ինչպիսիք են անվասայլակները, քայլակները, հիվանդանոցային մահճակալները և այլ սարքավորումները)
- Շատ կանխարգելիչ ծառայություններ (ինչպիսիք են սքրինինգները, պատվաստումները կամ պատվաստանյութերը և տարեկան «բարեկեցության» այցերը)

Մաս D-ն (դեղորայքի ծածկույթ)

- Փակում է դեղատոմսով դուրս գրվող դեղերի ծախսերը (ներառյալ առաջարկվող շատ սրսկումները կամ պատվաստումները)
- Medicare դեղորայքի ծածկույթով ծրագրերը կառավարում են մասնավոր ապահովահրական ընկերությունները, որոնք հետևում են offer Medicare-ի կողմից սահմանված կանոններին:

Ձեր Medicare տարբերակները

Երբ առաջին անգամ ստանաք Medicare, տարվա ընթացքում որոշակի ժամանակահատվածներում դուք կարող եք ընտրել ձեր Medicare-ի ծածկույթը ստանալու եղանակը: Գոյություն ունի Medicare ստանալու 2 հիմնական եղանակ՝

Original Medicare

- Original Medicare-ը ներառում է Medicare-ի Մաս «A» (Հիվանդանոցային ապահովագրություն) և Մաս «B» (Բժշկական ապահովագրություն).
- Դուք կարող եք միանալ Medicare-ի դեղերի առանձին ծրագրին՝ Medicare-ի դեղերի ծածկույթ ստանալու համար (Մաս D):
- Դուք կարող եք օգտվել ցանկացած բժշկի կամ հիվանդանոցի ծառայություններից, որ ընդունում է Medicare, ԱՄՆ-ում ցանկացած տեղ:
- Օգնելու ձեզ սեփական գրպանից կատարվող ծախսերը Original Medicare-ում վճարելու համար Medicare (ինչպես օրինակ՝ 20% համաապահովագրությունը), Դուք նաև կարող եք գնել Medicare-ի լրացուցիչ ապահովագրություն (Medigap):

☑ **Մաս «A»**

☑ **Մաս «B»**

Դուք կարող եք ավելացնել

☐ **Մաս «D»**

Դուք նաև կարող եք ավելացնել՝

☐ **Լրացուցիչ ծածկույթ**

Սա ներառում է Medicare Supplement Insurance (Medigap). Կամ Դուք կարող եք օգտագործել ապահովագրական ծածկույթը նախկին գործատուից կամ միությունից կամ Medicaid-ից:

Medicare Advantage
(նաեւ հայտնի է որպես Մաս C)

- Medicare Advantage ծագիրը մասնավոր ընկերության կողմից հաստատված Medicare ծրագիր է, որը առաջարկում է Original Medicare-ի այլընտրանք ձեր առողջության և դեղերի ծածկույթի համար: Այս «փաթեթային» պլանները ներառում են " Մաս «A», Մաս «B» և սովորաբար Մաս «D»:
- Դեպքերի մեծ մասում Ձեզ անհրաժեշտ կլինի օգտվել այն բժիշկների ծառայություններից, ովքեր գտնվում են պլանի ցանցում:
- Պլանները կարող են ունենալ սեփական գրպանից կատարվող ավելի փոքր ծախսեր՝ Original Medicare-ի համեմատ:
- Պլանները կարող են առաջարկել որոշ լրացուցիչ նպաստներ, որոնք Medicare-ի հիմնական պլանը չի հատուցում, օրինակ՝ տեսողության, լսողության և ատամների հետ կապված ծառայությունները:

☑ **Մաս «A»**

☑ **Մաս «B»**

Պլանների մեծ մասը ներառում է՝

☑ **Մաս «D»**

☑ **Որոշ լրացուցիչ նպաստներ**

Որոշ պլաններ ներառում են՝

☐ **Սեփական միջոցներից կատարվող ավելի քիչ ծախսեր՝**

Ստացե՛ք Ձեզ անհրաժեշտ օգնությունը

Այցելե՛ք Medicare.gov Ձեր տարածքում Medicare առողջապահական և դեղերի ծրագրերի մասին իմանալու, մասնակցող առողջապահական խնամք տրամադրողներին և մատակարարներին գտնելու համար, խնամքի մասին բարձրորակ տեղեկություններ ստանալուն այլնի վերաբերյալ:

Զանգահարե՛ք 1-800-MEDICARE (1-800-633-4227) Medicare-ի մասին տեղեկություններ և կարևոր հեռախոսահամարներ ստանալու համար: Եթե Ձեզ օգնություն է անհրաժեշտ անգլերենից կամ իսպաներենից բացի, մեկ այլ լեզվով, արտաբերե՛ք «Agent» («Գործակալ») բառը հաճախորդների սպասարկման ներկայացուցչի հետ խոսելու համար: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Նայե՛ք Ձեր «Medicare-ը և Դուք» ձեռնարկի ամենավերջին տարբերակը՝ նորությունների մասին տեղեկանալու, Medicare-ի հետ կապված Ձեր ծախսերը պարզելու և Medicare ծրագրով հատուցվող ծառայությունների մասին տեղեկություններ ստանալու համար:

Կապ հաստատե՛ք Առողջության ապահովագրության հարցում աջակցության Ձեր նահանգային ծրագրի (SHIP) ներկայացուցիչների հետ Medicare-ի ապահովագրական ծածկույթի, ապահովագրական պահանջագրերի, բողոքների և սահմանափակ եկամուտ ու միջոցներ ունեցող մարդկանց համար օգնության վերաբերյալ անվճար, անհատական խորհրդատվություն ստանալու համար: Առողջության ապահովագրության հարցում աջակցության նահանգային ծրագրի (SHIP) տեղական գրասենյակի հեռախոսահամարն իմանալու համար այցելե՛ք shiptacenter.org կայքէջ կամ զանգահարե՛ք 1-800-MEDICARE հեռախոսահամարով:

Այցելե՛ք Eldercare Locator (Տարեցների խնամքի ծառայության տեղակայում) eldercare.acl.gov կայքում տեղական տեղեկատվական աղբյուրները գտնելու, արտոնությունները պարզելու և երկարաժամկետ խնամք պլանավորելու համար:

Դուք իրավունք ունեք ստանալու տեղեկություններ Medicare-ի վերաբերյալ հասանելի ձևաչափով, ինչպես օրինակ՝ մեծ չափի տառատեսակով տեքստ, Բռայլի այբուբենով տեքստ կամ աուդիո ձայնագրություն: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Այցելե՛ք Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice կայքը կամ զանգահարե՛ք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Այս ապրանքն արտադրվել է ԱՄՆ հարկ վճարողի հաշվին:

CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

CMS Product No. 11514-AR (Armenian)
Revised July 2021